ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 27>> հունվար 2015թ N 4

ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ, 1.16-րդ և 1.17-րդ և 18-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1974-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 30-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից անցկացված 2014 թվականի բյուջետային տարվա գործունեության համապատասխանության աուդիտի եզրակացությունը .

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի հունիսի 9-ի N59 որոշմամբ հաստատված <<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության (հավելված N2) ու կրթության, մշակույթի և սպորտի վարչության (հավելված N6) կանոնադրությունների 2-րդ բաժիններում համապատասխանաբար կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետի՝ << ա>> ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

<<ա) իրագործում է պետական առողջապահական ծրագրերը, կազմակերպում մարզային ենթակայության պետական առողջապահական հաստատությունների աշխատանքը, օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է բնակչության անվճար բուժօգնության իրականացումը, վերահսկում է ոչ պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը>>.

<<բ>> ենթակետերի <<վերահսկում >> բառը փոխարինել << կազմակերպում և իրականացնում>> բառերով.

<<ժը>> և <<իե>> ենթակետերի <<վերահսկում >> բառերը փոխարինել << կազմակերպում >> բառերով.

2) 3-րդ կետի՝ <<ա)>> և <<ժ)>> ենթակետերի <<վերահսկում>> բառերը փոխարինել <<կազմակերպում>> բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ